«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ

Արձանագրություն թիվ 5
19.12.2022թ.

ՀԱԱՀ Ռեկտոր Վ. Ուռուտյանի կողմից 2022թ.-ի դեկտեմբերի 16-ին ստորագրված թիվ 949/Ա հրամանի համաձայն՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ներքոհիշյալ աշխատողներին և ուսանողներին՝ ՀՀ միջբուհական առաջնություններին Համալսարանը պատվով ներկայացնելու համար հայտնեցին ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ և պարգևատրեցին Հայաստանի ազգային ագրարային համալսարանի «ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐՈՎ».

1. Մխիթարյան Հերմինե Գարուշի՝ ՏՏ կենտրոնի տեղեկատվական տեխնոլոգիաների ուսումն. գործընթաց-րի ավտոմատացման բաժնի մասնագետ-ծրագրավորող
2. Չախոյան Կարեն Ռոբերտի՝ Տնտեսական վարչության մասնագետ
3. Կիրակոսյան Հայկ Սաշայի՝ Ֆիզիկական կուլտուրայի ամբիոնի վարիչ
4. Ասլանյան Վլադիկ Առաքելի՝ Ֆիզիկական կուլտուրայի ամբիոնի դասախոս
5. Ակոպով Արմեն Արարատի՝ Ֆիզիկական կուլտուրայի ամբիոնի ասիստենտ
6. Բեգլարյան Արսեն Դերենիկի՝ Ֆիզիկական կուլտուրայի ամբիոնի դասախոս
7. Աբրահամյան Էմմա Գարեգինի՝ Ֆիզիկ. կուլտ. ամբ. մասնագետ, ասիստենտ
8. Տեր-Հարությունյան Անժելա Աբրահամի՝ «Ագրոբիզնես» մասնագիտության «Ագրոբիզնես և ֆինանսներ» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանող
9. Հարությունյան Վահագն Երեմի՝ Մագիստրատուրայի «Ագրոէկոնոմիկա» մասնագիտության «Ագրարային մենեջմենթ» կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանող
10. Ղարիբյան Վահե Հովհաննեսի՝ «Պարենամթերքի տեխնոլոգիա» մասնագիտ. «Պարենամթերքի տեխնոլոգիա» կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանող
11. Գալուստով Աշոտ Ռոլանդի՝ «Ագրոբիզնես» մասնագիտության «Ագրոբիզնես և ֆինանսներ» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանող
12. Թևոսյան Էրիկ Արամայիսի՝ «Ագրոբիզնես» մասնագիտության «Ագրոբիզնես և ֆինանսներ» կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանող
13. Մելիքյան Յուրա Արսենի՝ ՀԱԱՀ Ա. Քոչինյանի անվան գ/տ քոլեջի «Հաշվապահական հաշվառում» մասնագ. 3-րդ կուրսի ուսանող
14. Պետրոս Պետրոս-Գևորգ Հրաչ՝ «Անասնաբուժություն» մասնագիտության, «Անասնաբուժություն» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանող
15. Ալավերդյան Հրայր Դավիթի՝ ՀԱԱՀ հանրակրթական ծրագրերի ուսուցման վարժարանի 12-րդ դասարանի աշակերտ
16. Գավուկչյան Գոռ Հարությունի՝ «Ագրոէկոնոմիկա» մասնագիտության «Ագրոպարենային համակարգի էկոնոմիկա» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանող
17. Գասպարյան Վարազդատ Արթուրի՝ «Ագրոնոմիա» մասնագիտության «Ջերմատնային ագրոտեխնոլոգիա» կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանող

18. Մարտիկեան Մայքլ Մկրտիչի՝ «Ագրոբիզնես» մասնագիտության «Ագրոբիզնես և ֆինանսներ» կրթական ծրագրի 1-ին կուրսի ուսանող

19. Ծատուրով Ռազմիկ Արշակի՝ ՀԱԱՀ հանրակրթական ծրագրերի ուսուցման վարժարանի 12-րդ դասարանի աշակերտ

20. Սոլոմոնյան Արմեն Կարենի՝ Մագիստրատուրայի «Պարենամթերքի տեխն.» մասնագ. «Խմորման արտ. տեխնոլոգիա և գինեգործ.» կրթ.ծր. 1-ին կուրսի ուսանող

21. Խաչատրյան Միշա Լյուդվիգի՝ ՀԱԱՀ Ա. Քոչինյանի անվան գ/տ քոլեջի «Ագրոէկոլոգիա» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանող

22. Գալստյան Համլետ Արթուրի՝ ՀԱԱՀ Ա. Քոչինյանի անվան գ/տ քոլեջի «Անասնաբուժություն» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանող

23. Խաչատրյան Արման Վարդանի՝ ՀԱԱՀ Ա. Քոչինյանի անվան գ/տ քոլեջի «Ագրոէկոլոգիա» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող

24. Մանուկյան Սաշիկ Գոռի՝ «Պարենամթերքի տեխնոլոգիա» մասնագիտության «Պարենամթերքի տեխնոլոգիա» կրթական ծրագրի 1-ին կուրսի ուսանող

25. Հախվերդյան Վլադիմիր Վարդանի՝ «Պարենամթերքի տեխնոլոգիա» մասն. «Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործ.» կրթ. ծր. 1-ին կուրսի ուսանող

26. Եղիազարյան Կարեն Գառնիկի՝ ՀԱԱՀ հանրակրթական ծրագրերի ուսուցման վարժարանի 11-րդ դասարանի աշակերտ

27. Քոչարյան Անժելա Միքայելի՝ «Ագրոէկոնոմիկա» մասնագիտության «Ագրոպարենային համակարգի էկոնոմիկա» կրթական ծրագրի 1-ին կուրսի ուսանող

28. Ներսիսյան Մարգարիտա Գոռի՝ ՀԱԱՀ Ա. Քոչինյանի անվան գ/տ քոլեջի «Սպառողական ապրանքի որակի փորձաքննություն» մասն. 1-ին կուրսի ուսանող

1. ՀԱԱՀ-ում իրականացվող Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքների պահպանման ու զարգացման ծրագրերի շրջանակներում ՀԱԱՀ գիտական կենտրոնների, գիտահետազոտական ինստիտուտների և հետազոտական կենտրոնների 2022թ-ին կատարած աշխատանքների հաշվետվությունների քննարկման վերաբերյալ.

ՀԱԱՀ Գիտական խորհուրդը բաց քվեարկությամբ միաձայն որոշեց.

1.1. Հաստատել ՀԱԱՀ գիտական կենտրոնների, գիտահետազոտա-կան ինստիտուտների ու հետազոտական կենտրոնների տարեկան հաշվետվությունները, երաշխավորել գիտության կոմիտե ներկայացնելու ու հետագա ֆինանսավորման.

- ՀԱԱՀ-ի «Ագրոկենսատեխնոլոգիայի ԳԿ» մասնաճյուղ,
- ՀԱԱՀ-ի «Ոսկեհատի խաղողագինեգործության ԳԿ» մասնաճյուղ,
- «Հ. Պետրոսյանի անվ. հողագիտ., ագրոքիմիայի և մելիորացիայի ԳԿ» մ/ճ,
- Սննդագիտության և կենսատեխնոլոգիաների ԳՀԻ,
- Գյուղմեքենայացման և ավտոմատացման ԳՀԻ,
- Ագրարային քաղաքականության և տնտեսագիտության հետազ. կենտրոն,
- Գյուղատնտեսական կենդանիների սելեկցիայի, գենետիկայի և կերակրման հետազոտական կենտրոն,

- Անասնաբուժության և անասնաբուժական սանիտարական փորձաքննության հետազոտական կենտրոն:

1.2. Հանձնարարել բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին.

- սերտացնել համագործակցությունը ՀԱԱՀ այլ ստորաբաժանումների հետ, խուսափել հետազոտական ուղղությունների կրկնություններից, աշխատանքներում ակտիվորեն ներգրավել ուսանողներին,
- համագործակցել մարքեթինգի բաժնի, գործընկեր և դոնոր կազմակերպությունների հետ՝ գիտական հետազոտությունների կիրառական արդյունքներն առևտրայնացնելու, մասսայական արտադրություն սկսելու և արտադրությունում ներդնելու համար,
- պատշաճ կերպով օգտագործել տարբեր գիտական ծրագրերի շրջանակում ձեռքբերված նորագույն սարքավորումները,
- ուշադիր հետևել գյուղատնտեսության՝ աշխարհում զարգացող նորագույն ուղղություններին ու միտումներին (ռեգեներատիվ գյուղատնտեսություն, պեմակուլտուրա, ավտոմատ կառավարվող ռոբոտներ և այլն):

1.3. Հանձնարարել լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ Ս. Ավետիսյանին հանրության լայն զանգվածներին իրազեկել ՀԱԱՀ գիտական ստորաբաժանումների կողմից ստացված կիրառական արդյունքների մասին:

1.4. Հանձնարարել «Ոսկեհատի խաղողագինեգործության ԳԿ» մասնաճյուղի տնօրեն Գ. Սամվելյանին աշխատանքներ տանել միկրոգինեգործության զարգացման ուղղությամբ:

1.5. Հանձնարարել ագրարային քաղաքականության և տնտեսագի-տության հետազոտական կենտրոնի տնօրեն Ա. Ոսկանյանին աշխատանքներ տանել 2022թ.-ի ընթացքում իրականացված հետազոտությունների արդյունքների հանրայնացման, ՀՀ կառավարության կողմից իրականացվող սուբվենցիոն ծրագրերի հասցեականության և արդյունավետության գնահատման ուղղությամբ:

1.6. Հանձնարարել Գյուղատնտեսական կենդանիների սելեկցիայի, գենետիկայի և կերակրման հետազոտական կենտրոնին՝ հետազոտություններ իրականացնել նաև Բալահովիտի ՈՒՓՏ-ում, ինչպես նաև կենդանիների համար տնտեսությունում ստացված փորձարարական կերախառնուրդներն օգտագործել հետազոտական կենտրոնի հետ համագործակցող ֆերմերային տնտեսություններում ու գնահատել դրանց արդյունավետությունը, իսկ արդյունքները հանրայնացնել:

1.7. Հանձնարարել Ընդհանուր քիմիայի ամբիոնի վարիչ Լ. Հարութ-յունյանին տարբեր նմուշերի կենսաքիմիական փորձաքննության ծառայություններ մատուցելու նպատակով ճշտել ստանդարտները:

2. **ՀԱԱՀ «Աշխատանքային կիսամյակի սկզբունքով պրակտիկայի կազմակերպման և անցկացման» կանոնակարգի քննարկման հարցի վերաբերյալ.**

ՀԱԱՀ Գիտական խորհուրդը բաց քվեարկությամբ միաձայն որոշեց հաստատել

«Աշխատանքային կիսամյակի սկզբունքով պրակտիկայի կազմակերպման և անցկացման կանոնակարգ»-ը:

3. Թոռնիկ Քյարամի Ալիյանին որպես հայցորդ ձևակերպելու, ատենախոսական աշխատանքի թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ Գիտական խորհուրդը բաց քվեարկությամբ միաձայն որոշեց.

3.1. Թոռնիկ Քյարամի Ալիյանին ձևակերպել որպես հայցորդ պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի անասնաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիաների ամբիոնում:

3.2. Թեկնածուական ատենախոսական աշխատանքի թեման հաստատել «Բուսական ծագման հումքի օգտագործումը նոր տեսակի կաթնամթերքի արտադրությունում» անվանումով՝ Ե.18.01 - «Բուսական և կենդանական ծագման մթերքների վերամշակման և արտադրության տեխնոլոգիա» մասնագիտությամբ:

3.3. Աշխատանքի գիտական ղեկավար հաստատել տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Անահիտ Ռազմիկի Բեգլարյանին:

4 ՀԱԱՀ Մեթոդական խորհրդի կողմից ներկայացված՝ «Ֆրուտենիա» ծրագրի շրջանակներում մշակված ուսումնական ձեռնարկները հրատարակման երաշխավորելու հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ Գիտական խորհուրդը բաց քվեարկությամբ միաձայն որոշեց «Ֆրուտենիա» ծրագրի շրջանակներում մշակված ուսումնական երկու ձեռնարկները երաշխավորել հրատարակման.

- «Պտղաբուծություն» (հեղ.՝ Ա. Հովհաննիսյան, Ա. Զաքարյան)
- «Ինտենսիվ այգու հիմնում և կառավարում» (հեղ.՝ Գ. Հարությունյան, Լ. Ավետիսյան, Է. Ստեփանյան):

5. Ուսումնական պլաններում առաջարկվող փոփոխությունների հաստատման հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ Գիտական խորհուրդը բաց քվեարկությամբ միաձայն որոշեց.

5.1. Հաստատել ՀԱԱՀ հեռակա ուսուցման համակարգի բակալավրիատի «Անասնաբուծություն» մասնագիտության «Կենդանագիտություն և կենսատեխնոլոգիա» կրթական ծրագրի ուսումնական պլանում «Կենդանաբանություն» առարկայի տեղափոխությունը 2-րդ կիսամյակից 3-րդ կիսամյակ, ինչպես նաև «Ընտանի կենդանիների մորֆոլոգիա» առարկայի տեղափոխությունը 3-րդ-ից 2-րդ կիսամյակ:

5.2. Հաստատել ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի առկա ուսուցման «Ագրարային մենեջմենթ» մագիստրոսական կրթական ծրագրի ուսումնական պլանի հայերեն թարգմանությամբ տարբերակը:

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ.Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ